



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԵՐՄՈՒԿ
ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 17

3 նոյեմբերի 2025 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու⁸անդամներ:

Բացակա էին՝ Գ. Խաչատրյան, Ն. Հովսեփյան,
Զ. Լալումյան, Ն. Նիկեֆոսյան, Զ. Բաբայան

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
համայնքի ղեկավարի խորհրդական Կարեն Գևորգյանը, համայնքի
վարչական բնակավայրերի ղեկավարներ Սևակ Մկրտչյանը և Արտակ
Բագրատյանը, «Ջերմուկի կոմունալ տնտեսություն » ՀԱՈԿ-ի տնօրեն
Արտուշ Սիմոնյանը:

Նիստը վարում էր Ջերմուկ համայնքի ղեկավար՝ Մանան Գևորգյանը

Նիստը արձանագրում էր Ջերմուկի համայնքապետարանի
աշխատակազմի քարտուղար՝ Գոհար Թադևոսյանը

ԼՍԵՑԻՆ

**ԶԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 3-Ի ՆԻՍՏԻ
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկ. Մանան Գևորգյան)

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի
14-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան՝

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 3-ի նիստի
հետևյալ օրակարգը՝

1.1. Արտուշ Էդվարդի Սիմոնյանին Ջերմուկ համայնքի ղեկավարի տեղակալի
պաշտոնում նշանակելու մասին.

զեկ. համայնքի ղեկավար Մ. Գևորգյան

1.2. Զերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի հուլիսի 28-ի N 49-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

զեկ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.3. Զերմուկ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին

զեկ. համայնքի ղեկավար Մ. Գևորգյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է նտնում ստորագրման պահից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ - 8

Դեմ - 0

Ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 81-Ա/

ԼՍԵՑԻՆ

**ԱՐՏՈՒՇ ԷԴՎԱՐԴԻ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ԶԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՏԵՂԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկ. Մանան Գևորգյան)

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, Զերմուկ համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 11-ի N 2-Ա որոշման և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

1. Արտուշ Էդվարդի Սիմոնյանին նշանակել Զերմուկ համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնում:

2. Զերմուկ համայնքի ղեկավարի տեղակալի գործառույթները սահմանված են «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով և «ՀՀ Վայոց ձորի մարզի Զերմուկի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությամբ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից և գործողության մեջ է դրվում 2025 թվականի նոյեմբերի 4-ից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ - 8

Դեմ - 0

Ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 82-Ա/

ԼՍԵՑԻՆ

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 28-Ի N 49-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Ձեկ. Գոհար Թադևոսյան)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 34-րդ հոդվածով՝

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի հուլիսի 28-ի «Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթների կազմակերպման համար ստեղծել մրցութային հանձնաժողով ստեղծելու մասին» N 49-Ա որոշման 1-ին կետում «Աշոտ Խաչատրյան- համայնքի ղեկավարի տեղակալ» բառերը փոխարինել «Կարեն Գևորգյան- համայնքի ղեկավարի խորհրդական» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի նոյեմբերի 4-ից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ - 8

Դեմ - 0

Ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 83-Ա/

ԼՍԵՑԻՆ

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Ձեկ. Մանան Գևորգյան)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով՝

1. Ջերմուկ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական՝ վերջին նիստի գումարման օր և ժամ սահմանել 2025 թվականի դեկտեմբերի 24-ին, ժամը՝ 12.00-ին:







2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ - 8 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 84-Ա/


ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ազգանուն, անուն, հայրանուն	ստորագրություն
Սարգսյան Վարդան Ռաֆիկի	
Սարգսյան Լուսիկ Ժորայի	
Վարդազարյան Աննա Վասակի	
Խաչատրյան Գոհար Բաբկենի	բացակա
Համբարձումյան Մխիթար Սամվելի	
Այվազյան Մխիթար Վոլոդյայի	
Մկրտչյան Մարինե Մայիսի	
Բաբայան Ժիրայր Ժորայի	բացակա
Մնացականյան Արկադի Ալբերտի	
Գևորգյան Մանան Աղվանի	
Վահանյան Վարուժան Կնյազի	բացակա
Հովակիմյան Ազատ Հայրիկի	բացակա
Ավետիսյան Սյուզաննա Թաթուլի	բացակա

Ջերմուկ համայնքի ղեկավար



ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ



Նիստին արձանագրեց՝ Գոհար Թադևոսյանը

